Հարցեր փաստաբան Աշխեն Դաշյանին:

1. **Ըստ «Դատալեք» տեղեկատվական համակարգի, ՎԴ/4272/05/10 գործով հայցի ապահովման միջոց սկզբում կիրառվել է, իսկ հետո՝ մերժվել: Կմանրամասնե՞ք որն է բավարարվել, որը՝ ոչ: Եվ միջնորդությունը չի բավարարվել ի՞նչ հիմքով**

Դիմող Հռիփսիմե Ղալաչյանը հայցապահանջը 18.11.2010թ-ին ներկայացնելուց հետո մեկ ամիս անց տեղեկանում է, որ բնակարանի վրա փաքցված է «Բարս» Անշարժ գույքի գործակալության գովազդային վահանակը «տրվում է վարձակալության» գրությամբ, անմիջապես 11.01.2011թ-ին դատարանին խնդրում է կիրառել հայցի ապահովում միջոց, որը Դատարանի կողմից բավարարվում է:

Դատարանի որոշմամբ ՀՀ ԿԱ ԱԳԿ Պետական կոմիտեին արգելվում է Երևան քաղաքի Պարոնյան 12 թիվ 37 բնակարանի նկատմամբ կատարել որևէ գործարքի պետական գրանցում՝ մինչև գործով վերջնական դատական ակտկայացնելը:

2011-2018թթ Հռիփսիմե Ղալաչյանը վստահ լինելով, որ առկա է միջանկյալ դատական ակտ ժամանակավորապես արգելանք կիրառելու վերաբերյալ, վստահ լինելով գույքի նկատմամբ որևէ գործարք չի իրականացվի, շարունակել է իր դատական պաշտպանությունը:

Մինչդեռ 31.01.2018թ-ին կադաստրային գործի նյութերը ստանալուց պարզում է, որ դատարանի որոշման հիման վրա արգելադրված բնակարանը մի քանի անգամ օտարվել է, բաժանվել է առանձին գույքային միավորների,նորից վերավաճառվել է:

**Մասնավորապես** .

**Արգելադրված գույքը** երկու անգամ օտարվել է՝ 11.01.2016թվականին՝ գրանցված սեփականատեր Լիանա Դավիդյան Յուրի՝, 14.02.2017թվականին՝ գրանցված սեփականատեր Արարատ բանկ ԲԲԸ, 09.02.2017թ կնքվել է անշարժ գույքի հաջորդող գրավի , հիփոթեքի պայմանագիր:

**Այնուհետև արգելադրված** Ք Երևան Պարոնյան փողոց 12/թիվ 37բնհասցեում գտնվող անշարժ գույքը <u>տարանջատվել է և գրանցվել որպես երկու առանձին գույքային միավորների և գրանցվել որպես</u>

1. Ք Երևան Պարոնյան փողոց թիվ 37տարածքի և
2. Ք Երևան Պարոնյան փողոց թիվ 36,37տարածք :

Փաստացի անհասկանալի պատճառով դատարանի կողմից արգելադրված գույքը իրացվել էր, փոփոխվել էր նպատակային նշանակությունը, մասմաս վերավաճառվել այլ երրորդանձանց:

ԵՎ երկրորդ անգամ հայցի ապահովման միջոցի նպատակը դա էր որ դատարանի արգելանքը իր նպատակին չի ծառայում, Դատարանի միջանկյալ որոշումը բովանդակային առումով չէր կատարվել , որի պատճառով 22.02.2018թ կրկին անգամ ներկայացրել ենք միջնորդություն դատարան ՝ հայցի ապահովման նպատակով՝ նկատի ունենալով, որ գույքի շարունակական օտարում է տեղի ունենում, փորձելով կանգնեցնել այն, քանի որ դատարանի վերջնական դատական ակտը առարկայազուրկ կլիներ, եթե վերջում պարզվեր գույքչկա:

Սակայն Դատարանը հայցի ապահովման միջոց կրկին կիրառելու միջնորդությունը մերժեց միայն այն հիմնավորմամբ, որ *դատարանի դեռևս 11.01.2011թ-ին կայացված որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց արգելվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին Երևան քաղաքի Պարոնյան 12 թիվ 37բնակարանի նկատմամբ կատարել որևէ գործարքի պետական գրանցում, և անկախ այն հանգամանքից, թե հետագայում տվյալ բնակարանը տարանջատվել է մեկից ավել իմասերի, թե ոչ :*

Այսինքն դատարանը ըստէության հայտնեց, որ ավելի վաղ արդեն կիրառել է միջոց և այլևս դրա անհրաժեշտությունն չկա, նշելով, որ այն պահում է իր ուժը անկախ գույքի բաժանումից և փորձեց խնդիրը ուղղել դեպի Կադաստր, Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որպես նրանց պարտավորություն դատական ակտի պահանջներն կատարելու :

Այնուհետև բողոքարկել ենք Կադաստրի կոմիտեի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունները՝ գույքի արգելանքից հանելու մասով, սակայն մերժվել են Բողոքները և որևէ քայլ չեն ձեռնարկվել դատարանի որոշմամբ արգելադրված գույքի պահպանման համար, ընդորում բողոքներով նշել ենք նաև, որ դատական ակտի չկատարումը հանգեցնում է քրեորեն հետապնդելի արարք և քայլեր չձեռնարկելու պարագայում հաղորդում կներկայացվի իրավասու մարմիններին, սակայն ապարդյուն:

## 2. 10 տարի քննվել է այս գործը: Այն իսկապե՞ս այդքան ժամանակ էր պահանջում: Ինչ-որ միտում տեսնո՞ւմ եք: Արդյո՞ք ողջամիտ ժամկետում է քննվել հայցը:

Գործի քննությունը սկիզբ է առել դեռևս 2010թ, նշանակվել են ընդհանուր 31 դատական նիստեր: Ընդհանուր առմամբ միջինում դատական նիստերը նշանակվել են 4-5 ամիսը մեկ անգամ:

Գտնում եմ, որ այդքան ժամանակ չէր կարող պահանջվել գործի քննության համար, գործով հստակ ունեինք երկու փաստ՝

Առաջին փաստը այն էր, որ և Հայցվորը, և Պատասխանողը հանդիսացել են առաջին հերթի ժառանգներ և ունեին ժառանգության ստանալու հավասար իրավունք, որի համար երկու կողմն էլ դիմել էին

Երկրորդ փաստը այն էր, որ ամբողջ ժառանգությունը և ժառանգության վկայագիրը տրվել էր միայն մեկ ժառանգի՝ Պատասխանողին, դրանով խախտելով իմ վստահորդի հոր ժառանգությունը ստանալու իրավունքը:

Ընդորում այս երկու փաստերն էլ ի սկզբանե անվիճելի փաստեր են եղել և դատավարության մասնակիցների և դատարանի համար:

Իսկ գործով կիրառելի իրավական հիմքերը նույնպես հստակ էին, ժառանգի դիմելու պահից ժառանգությունը պատկանում է ժառանգին, անկախ ժառանգության ստացման ժամանակի, այսինքն

դատարանին մնում էր պարզել այդ իրավունքի առկայությունը:

Այն որ ողջամիտ ժամկետում չի քննվել գործը դա միանշանակ է, սակայն գործի բարդության տեսանկյունից այդքան ժամանակ այդ գործի քննության համար ևս չէր պահանջվում,ընդորում գործի քննության արագությունը շատ կարևոր էր այս դեպքում, քանի որ գույքի արգելանքը պահպանված չէր,գույքը պարբերաբար վաճառվում էր և ամեն անգամ ավելի ու ավելի էինք հեռանում պահանջից, քանի որ արդեն կարող էին բարեխիղճ ձեռք բերողի հարց բարձրացնել բնակարանի գնորդները:

Գործի քննության ողջամիտ ժամկետների վրա ազդել են նաև դատավարության ոչ պատշաճ կողմերի ներգրավումը դատարանի կողմից գործի քննությանը այն դեպքում, երբ դատարանը վերջնական վճռով եզրահանգում է, որ նրանց հետ կնքված գործարքները այլևս իրավաբանական ուժ չունեն և չեն կարող անվավեր ճանաչվել:

Ստացվում է, որ գործի քննության ընթացքում **2017- 2019թթ-ը, միայն երկու տարի**, դատարանը իր նախաձեռնությամբ ներգրավվել է դատավարության տարբեր կողմեր՝ երրորդ անձիք, մինչդեռ այդ նույն երրորդ անձանց մասով հստակ վճռով արձանագրել է,որ անհնար է այդ երրորդ անձանց կողմից կնքված գործարքներն ու պետական գրանցումներն անվավեր ճանաչել ,քանի որ բոլորը կորցրել են իրավաբանական ուժը օրենքի կարգավորմամբ:

Դատարանի համար ի սկզբանե հայտնի են եղել օրենսդրական կարգավորումները, ուստի ներգրավվել անձանց, որպես դատավարության մասնակից,սակայն հետագայում արձանագրել ,որ վերջիններիս վերաբերյալ պետական գրանցումներն, գործարքներն անհնար է անվավեր ճանաչել ,սահինքնին դատարանի կողմից դատական և իրավական պաշտպանության հայցող անձի ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումն է:

## 3. Ի՞նչպես եք գնահատում հայցը մասնակի բավարարելու դատարանի վճիռը: Հայցվորի իրավունքների ինչպիսի՞ խախտումներ եք տեսնում:

Գործի քննությունը 2010թ-ից մինչև 2014 ապրիլը դատավարության կարգավիճակ ունեցող նոտարը ազատված չի եղել պաշտոնից և նրա համար գործել են այլ իրավական հիմքեր և եթե 2010թ-ին հարուցված գործի քննությունը ավարտվեր օրինակ 4 տարվա ընթացքում՝ 2014թվականին, ապա նոտարական պալատը կկարողանար այսօր հատուցել նոտարի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պատճառված վնասները: ՀՀ Արդարադատության նախարարի 29.04.2014թ. հրամանով գործով պատասխանող նոտար Էմմա Շաքոյանն ազատվում է նոտարի պարտականություններից:

**Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման հետևանքով փոխվել են նաև օրենսդրական կարգավորումները, որոնց արդյունքում Հայցվորը ոչ իր մեղքով, չի ստացել <u>իր պահանջի ամբողջական բավարարում</u>, մինչդեռ հակառակ պարագայում այն հնարավոր կլիներ:**

Սույն գործը քննվել է 10 տարի ժամկետում, որի ընթացքում փոխվել է ներպետական օրենսդրությունը, վարչական դատավարության օրենսգիրքը և Նոտարիատի մասին ՀՀ օրենքը, արդյունքում իրավական պաշտպանություն հայցող անձը չի կարողացել հասնել իր պահանջի ամբողջական բավարարման, օրենսդրական փոփոխմամբ պահանջի հետևանքներ կիրառելու հարցում:

Դատարանը դատական ակտ է կայացնում նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ, սակայն միևնույն ժամանակ վճռով նշում, որ նոտարական գործողության հետևանքը վերացնել հնարավոր չէ, այսինքն նոտարի գործողություններից հետո գույքի վաճառքի և

պետական գրանցումներն, որն ավելի շատ մոտ է պահանջի մերժման:Ի վերջո իմ վստահորդը ցանկանում էր նոտարի գործողություններն ոչ իրավաչափ ճանաչել և վերադարձներ ի գույքը՝ բնակարանը իր բաժնի մասով,սակայն դատական ակտով գույքի վերադարձ,իր բաժնի վերականգնում այդպես էլ տեղի չունեցավ:

Անձի գույքի ժառանգման իրավունքը դա միայն տեսական և գույքային իրավունք չէ, այն անձի համար ունի ավելի բարձր հոգևոր արժեք այնքանով, որ դրանով ոչ միայն անձը վերականգնում է իր գույքային իրավունքը,այլ այդ ժառանգվող գույքի հետկապված իր հիշողություններն է ժառանգում,իր նախնիների մասին տեղեկանալու,որպես ընտանեկան մասունքունենալու,իր անձնական կյանքի հարգման իրավունքի է, որը միազգային իրավունքի ուժով ճանաչել է նաև Եվրոպական դատարանը իր մի շարք նախադեպային դատական գործերով:

Հետևաբար միայն իրավունքի խախտման փաստը ճանաչելը դա բավարար չէ ՝ առանց այդ գույքը վերադարձնելու, առանց ֆինանսական հատուցման, առանց վնասները վերականգնելու, արդյունքում կայացված դատական ակտը որևէ բարենպաստ իրավիճակ չի ստեղծել իմ վստահորդի համար, չի վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը,արդյունավետ չի եղել տաս տարիների դատական պաշտպանությունը, դատարանն արդյունավետ չի եղել իր համար: Դատարանը ոչ իրավաչափ է ճանաչել նոտարի գործողությունը այն ժամանակ,երբ նոտարն ազատված է աշխատանքից,չունի ֆինանսական միջոցներ, երբ գույքը ֆիզիկապես այլևս գոյություն չունի,մասնատված վաճառված է և ունի արդեն 8-րդ գնորդը:

**4. Որն է հայցվորի հաջորդ քայլերը: Ինչպե՞ս եք պատկերացնում նրա կրած վնասի փոխհատուցման հարցը: Խնդրում եմ՝ մանրամասնեք:**

1. 09.10.2019թ գանգատ ենք ներկայացրել Մարդու իրավունքների Եվրոպական դատարան Կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներով, բարձրացրել ենք դիմողի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման, այդ խախտման դեմ իրավունքի պաշտպանության միջոց չունենալու, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման արդյունքում գույքային իրավունքների խախտման վերաբերյալ, դեռևս ընթացիկ փուլում է:

   28.04.2020թ կայացված վճռից հետո ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, մասնավորապես՝
   31.05.2020թ. դիմում է ներկայացվել ՀՀ նոտարական պալատի ղեկավարին՝ նոտարի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, որի վերաբերյալ 08.06.2020թ ՀՀ նոտարական պալատի ղեկավարի կողմից մերժվել է դիմումատուի պահանջը:

   01.06.2020թ. դիմում է ներկայացվել արդարադատության նախարարին՝ նոտարի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, որը 27.07.2020թ ՀՀ Արդարադատության նախարարի կողմից մերժվել է, որը բողոքարկվել է վերադասության կարգով: Վերադասության կարգով ներկայացված բողոքը 28.09.2020թ-ին ՀՀ Արդարարադատության նախարարի կողմից նույնպես մերժվել է:

   11.11.2020թ ընդդեմ Արդարադատության նախարարության հայցադիմում ենք ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով դատարանից Պարտավորեցնել ՀՀ արդարադատության նախարարությանը ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ այն է Հռիփսիմե Սարգսի Ղալաչյանին տրամադրել թիվ ՎԴ/4272/05/10 դատական գործով նոտարական գործողության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ՝ ինը միլիոն ՀՀ դրամի չափով:

   17.11.2020թ վարչական դատարանը հայցադիմումը ընդունել է վարույթ ՎԴ/9268/05/20 և նշանակել դատական նիստ **30.03.2021թվականին**:

   22.09.2020թ. դիմում ենք ներկայացրել նաև

կառավարության, վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ ողջամիտ ժամկետում արդարադատություն չստանալու հետևանքով պատճառված վնասի հատուցման գործով, որն ընթացիկ փուլում է՝ դեռևս որևէ պատասխան գրություն չի ստացվել Դիմումատուի կողմից:

Դեռևս ընթացիկ փուլում է նաև մեր դիմումի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանին կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը՝ ողջամիտ ժամկետների խախտման դեմ իրավունքների պաշտպանության միջոցի բացակայության հիմքով վարույթը:

Գտնում ենք, որ վնասը ենթակա է հատուցման Հայաստանի Հանրապետության կողմից:

Քանի որ, Նոտարը, վավերացնելով փաստաթուղթը,«Հայաստանի Հանրապետության անունից» հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը:Նրա ստորագրությամբ ու կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Սահմանադրական Դատարանը **10 մայիսի 2016 թ. Թիվ ՍԴՈ-1271 որոշմամբ** անդրադառնալով Նոտարների կողմից պատճառված վնասը պետության կողմից հատուցելու իրավական խնդրին ըստ էության նշել է, որ եթե պետությունը բավարար կառուցակարգեր և ընթացակարգեր չի սահմանում անձի խախտված սեփականության իրավունքի պաշտպանության համար, որպիսի պարտականություն **կրում է պետությունը**, ինչպես նաև հստակ ընդգծել, որ պետությունը նաև կրում է պատասխանատվություն այն դեպքերում, երբ նոտարների կոմղից ապահովագրվող պատասխանատվության ռիսկի նվազագույն չափը բավարար չի նոտարի մեղքով պատճառված վնասի իրավաչափ հատուցման համար, այս պարագայում այս գործով ոչ միայն բավարար չէ , այլ և ընդհանրապես առկա չէ ազատված նոտարի ապահովագրված գումար, չկան բավարար իրավական

գործիքներ նման իրավիճակում հայտնված անձանց համար ստանալու վնաս:

ՍԴ որոշումից մեջբերում

*„Այն հանգամանքը, որ նոտարը պարտավոր է ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը, վկայում է այն մասին, որ օրենսդիրը փորձել է ամրագրել այնպիսի ընթացակարգ, որի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցումը կլինի երաշխավորված: Սակայն հարկ է նշել, որ ապահովագրվող պատասխանատվության ռիսկի նշված նվազագույն չափը միշտ չէ, որ կարող է բավարար համարվել նոտարի մեղքով պատճառված վնասի իրավաչափ հատուցման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի նշված դրույթները, որոնք կարգավորում են նոտարի պատասխանատվության վերաբերյալ հարցերը, հաշվի չեն առնում հնարավոր իրավիճակների ամբողջ բազմազանությունը և բավարար կառուցակարգեր և ընթացակարգեր չեն սահմանում անձի խախտված սեփականության իրավունքի պաշտպանության համար, որպիսի պարտականություն ՀՀ Սահմանադրության 3-րդ և 75-րդ հոդվածների համաձայն* ***կրում է պետությունը***: